

Բաղիլներուն պէս ձիւնին:
 Եւ իրիկուան մէջ խորին,
 Իրիկուան մէջ ծաւալական ու բուրեան,
 Կարկաջն աղբիւրին,
 Իր շրջակայքի
 Հովանոցներուն մէջ կը պըտուտքի,
 Հոն ծաղիկներուն ու տերեւին հետ,
 Ըսպասելու որ ծագի
 Լոյսն առաջին լուսաւորին:

30. ԻՐԻԿՈՒԱՆ ԻՂՁ

Օրհորդ Նարդիկին

Իրիկուան մէջ անհետելու յոյսն ունենալ,
 Եւ յանձնըւիլ նուրբ կածանի մը քըմայքին.
 Խորիսի մը պէս թողո՛ւլ ձանձրոյթն ու հափրա՛նքն ալ,
 Եւ անդորրով պատմուճանե՛լ հիւանդ հոգին:

Ու լոյսերո՛ւլ պարածածկել հիւանդ հոգին.
 Քոյր ունենալ ջուրին կարկաջն ու կապոյտ բայ,
 Եւ ունկնդրել ճամբուն քովերն երգող սիւքին,
 Մեծ քաղցրութեա՛ն մը խառնըւիլ, ու մենանա՛լ:

Ընկե՛րն ըլլալ ցորեններուն. մրգաստանին
 Դուռը բանալ զակի մը պէս, մըտերմօրէն,
 Ու թողուլ որ շահարիկներ ըզքեզ տանին

Թեւապարփակ՝ լայն լռութեան մը համօրէն:
 Հոն շրջասփիւռ ծառերուն հետ եղբայրանա՛լ.
 Տարփո՛ղն ըլլալ ծաղիկներուն. ծովածաւալ

Իրիկուան մէջ՝ անհետելու յո՛յսն ունենալ...

31. ԻՐԻԿՈՒԱՆ

Բանաստեղծ Վահրամ Թաթուլին

Իրիկունս է բարի՛, բարի՛, ու լիաձեռն ու հոտեւան.
 Ոսկի ուղ մը՝ կամուրջ եղած ընդմէջ տիւրի ու գիշերուան:
 Վարսաղիտակ ծառերուն տակ կը կղկաթիմ լոյսին համար.